ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/137

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Մասնակից՝ «Սեն-Լեվ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սեն-Լեվ» ՍՊԸ-ի տնօրեն Լ. Եղիազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02/2» ծածկագրով գնանշման հարցում, աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6066-2020 գրությամբ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.04.2020թ. թիվ 28-171 գրության հիման վրա, 23.04.2020թ.-ին «Սեն-Լեվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 23.04.2020թ.-ին:

04.06.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/137 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

10.06.2020թ.-ին և 22.06.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.06.2020թ.-ին:

2. **<u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 20.04.2020թ. թիվ 28-171 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի /ՀՀՌՑ/ կողմից 2020թ. մարտի 13-ին հայտարարված՝ ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02/2 ծածկագրով «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման մրցույթի շրջանակներում մասնակցել է ՍԵՆ-ԼԵՎ ՍՊ ընկերությունը և ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի որոշումների արդյունքում ճանաչվել է որպես ընտրված մասնակից:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 50-րդ կետով՝

ընտրված մասնակցին էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել, որին ի պատասխան ՍԵՆ-ԼԵՎ ՍՊ ընկերությունը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ պարբերությունը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ խնդրում եմ Ձեր որոշումը՝ ՍԵՆ-ԼԵՎ ՍՊ ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սեն-Լեվ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «**Սեն-Լեվ**» **ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 04.06.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սեն-Լեվ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6066-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 10.06.2020թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը բանավոր կերպով հայտնել է, որ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն սույն թվականի մարտի 20-ին մասնակցել է ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02/2 ծածկագրով 1-ին չափաբաժնով նախատեսված գնանշման հարցման ընթացակարգով «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար Երևանի հաղորդիչ կենտրոնի տեխնիկական մասնաշենքի հարթ տանիքի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման մրցույթին և օրենքով սահմանված կարգով ճանաչվել է հաղթող մասնակից:

Համաձայն սույն մրցույթի ընթացակարգի՝ Պատվիրատուի կողմից ներկայացվել է պայմանագրի նախագիծը և կից գրությունը, համաձայն որի «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն պետք է ներկայացնի որակավորման ապահովում՝ ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված

արժեքի 10 տոկոսի չափով /3 387 354 ՀՀ դրամ/ և փոխարենը կնքի պայմանագիր՝ ընդհանուր արժեքով 590 000 ՀՀ դրամ:

«Սեն-Լեվ» ՍՊԸ-ն ի սկզբանե մասնակցել է նշված մրցույթին, հաշվի առնելով, որ որակավորման ապահովումը ներկայացվելու է պայմանագրի արժեքի (այս դեպքում՝ 590 000 ՀՀ դրամ) 10 տոկոսի չափով՝ 59 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված արժեքի 10 տոկոսի չափով (3 387 354 ՀՀ դրամ), ինչը ընկերության համար անընդունելի է:

Միաժամանակ նշել է, որ տարիներ շարունակ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն մասնակցել է մրցույթների և ապահովել շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների բարձր մակարդակ: Նախորդ տարում պետական գնումների պայմանագիր կնքելիս նման կարգավորում չի եղել, ուստի սույն պայմանագրի կնքումից հրաժարվելը ոչ թե դիտավորություն է, այլ անուշադրության հետևանք:

Այսպիսով՝ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն նպատակահարմար չի գտել կնքել Պատվիրատուի կողմից ուղարկված պայմանագրի նախագիծն ու նշված որակավորման ապահովման չափը:

4. **<u>ՍՑ-LO</u>**-2020/137 **<u>ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով 13.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.03.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, 23.03.2020թ.-ին որոշել է «Սեն-Լեվ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

«Սեն-Լեվ» ՍՊԸ-ն 27.03.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն ի սկզբանե մասնակցել է մրցույթին, հաշվի առնելով, որ որակավորման ապահովումը ներկայացվելու է պայմանագրի արժեքի (այս դեպքում՝ 590 000 ՀՀ դրամ) 10 տոկոսի չափով՝ 59 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե կատարվելիք շին.

մոնտաժային աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված արժեքի 10 տոկոսի չափով (3 387 354 ՀՀ դրամ), ինչը ընկերության համար անընդունելի է: Միաժամանակ Մասնակիցը հայտնել է, որ նպատակահարմար չի գտնում կնքել Պատվիրատուի կողմից ուղարկված պայմանագրի նախագիծն ու նշված որակավորման ապահովման չափը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6066-2020 գրությամբ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով 13.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-20/02/2» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.03.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

«Սեն-Լեվ» ՍՊԸ-ն 27.03.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն ի սկզբանե մասնակցել է մրցույթին, հաշվի առնելով, որ որակավորման ապահովումը ներկայացվելու է պայմանագրի արժեքի (այս դեպքում՝ 590 000 ՀՀ դրամ) 10 տոկոսի չափով՝ 59 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված արժեքի 10 տոկոսի չափով (3 387 354 ՀՀ դրամ), ինչը ընկերության համար անընդունելի է: Միաժամանակ Մասնակիցը հայտնել է, որ նպատակահարմար չի գտնում կնքել Պատվիրատուի կողմից ուղարկված պայմանագրի նախագիծն ու նշված որակավորման ապահովման չափը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության, ինչպես նաև Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հետ համադրման արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Սեն-Լեվ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը ընդունել է նաև Մասնակիցը: Վերջինս իր 27.03.2020թ.-ին Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ նպատակահարմար չի գտնում կնքել Պատվիրատուի կողմից ուղարկված պայմանագրի նախագիծը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6066-2020 գրությամբ «Սեն-Լեվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/137 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սեն-Լեվ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**